ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ 2024-2026 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՄԺԾԾ հիմնական նպատակն է ներկայացնել համայնքի ծախսային ռազմավարությունը հաջորդ երեք տարիների համար և առաջիկա տարվա բյուջեի ծախսային ծրագրերի ֆինանսական գնահատականը: Տվյալ ռազմավարությունը ներառում է միջնաժամկետ հատվածում նախատեսված ծրագրերը և թե ինչպես են դրանք նպաստելու համայնքի նպատակների իրագործմանը:

1. ՀՀ համայնքային բյուջեների ՄԺԾԾ ոլորտային գերակայությունները

Գերակայությունները որոշվում են ինչպես համայնքի զարգացման հնգամյա ծրագրի գերակայությունների, այնպես էլ ՀՀ կառավարության ծրագրերի առաջնահերթ ուղղությունների հիման վրա:

<u>Համայնքային կառավարման ոլորտում</u> իրականացվում են համայնքային ծառայության կատարելագործման, տեխնիկական վերազինմանն ուղղված միջոցառումներ, ինչպես նաև համայնքային ծառայողների անձնակազմի կարողությունների զարգացում:

<u>Տնտեսության ոլորտում</u> շարունակվում են ներդրումները ճանապարհային տրանսպորտի, քաղաքաշինության, գյուղատնտեսության և ջրային տնտեսության, էներգետիկայի և բնապահպանության ոլորտներում (համապատասխան ծրագրերի առկայության պայմաններում):

<u>Տրանսպորտի բնագավառում</u> իրականացվելիք ծախսային քաղաքականության հիմնական գերակայություններն են ներհամայնքային փողոցների հիմնանորոգումները և լուսավորության ցանցի կառուցումն ու պահպանումը:

<u>Տնտեսական զարգացման բնագավառի</u> հիմնական գերակա ուղղությունն է գյուղատնտեսության, տեղական զբոսաշրջության և էկոտուրիզմի զարգացման, արևային էներգիայով աշխատող օբյեկտների կառուցման միջոցառումների իրականացումը:

<u>Բնապահպանության բնագավառում</u> կարևորվում է աղբահանության սանիտարական մաքրման, ինչպես նաև թափոնների կառավարման գործընթացների և միջոցառումների, տարածքների կանաչապատման, բնապահպանական այլ միջոցառումների իրականացումը:

<u>Քաղաքաշինության բնագավառի</u> քաղաքականության հիմնական ուղղություններն ու ծախսային գերակայություններն են,

-բնակավայրերի բարեկարգման, բազմաբնակարան բնակելի շենքերի հիմնանորոգման, ապօրինի շինությունների քանդմանն ուղղված միջոցառումների իրականացումը:

<u>Սոցիալ-մշակութային ոլորտներում</u> կարևորվում են ծախսային՝ հետևյալ գերակայությունները.

Սոցիալական ապահովության բնագավառում շարունակվում են առանձնակի ուշադրության կենտրոնում պահվել անապահով ընտանիքների, թոշակառուների, առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանվածության և հաշմանդամություն ունեցողներին լուծում պահանջող խնդիրները,

Կրթության բնագավառում պահպանվում է նախադպրոցական և արտադպրոցական կրթության բարեփոխումների շարունակական ընթացքը, առանձնակի ուշադրություն է դարձվում կրթության որակի բարձրացմանը, աշխատողների վերապատրաստման և նյութատեխնիկական հագեցվածության հարցերին: Շարունակվում է նախադպրոցական և արտադպրոցական հաստատությունների շենքային պայմանների բարելավման աշխատանքների իրականացումը:

Կարեւորվում է համանքային ենթակաության մշակույթի և սպորտի բնագավառների՝ մշակույթի տների, գրադարանների, հուշարձանների վերականգնման և պահպանման աշխատանքները:

ՄԺԾԾ գործընթացի արդյունքում սահմանվել են:

- Երկարաժամկետ հարկաբյուջետային սկզբունքները կամ նպատակները այնպիսի ցուցանիշների գծով, ինչպիսիք են համայնքային բյուջեների եկամուտները, ծախսերը (վարչական և ֆոնդային) և պակասուրդի մակարդակը:

Կարճաժամկետ և միջնաժամկետ հարկաբյուջետային ցուցանիշները:

Հաշվի առնելով երկարաժամկետ հարկաբյուջետային քաղաքականության նպատակները, ակնկալվող եկամուտների մակարդակը և ծախսերի անհրաժեշտությունը՝ որոշվել են ընդհանուր ծախսերի մակարդակը (և, հետևաբար, պակասուրդը) առաջիկա բյուջետային տարվա և ՄԺԾԾ ժամանակահատվածի հաջորդ երկու տարիների համար:

Ռազմավարական ծախսային գերակայությունները. ՄԺԾԾ գործընթացում ոլորտային և ծախսային գերակայությունների սահմանումը թույլ կտա, որպեսզի առաջիկա տարվա համայնքային բյուջեի նախագծի կազմման գործընթացն ուղղորդվի համապատասխան մշակված ռազմավարությունների դաշտով:

2. 2024-2026 թվականների համար ծրագրի կանխատեսումը

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքի տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիոն

ծրագրերի շրջանակներում 2024-2026 թվականներին նախագծվում են իրականացնել հետևյալ ծրագրերը.

1. Գավառ քաղաքի, Գանձակ, Սարուխան, Կարմիրգյուղ, Նորատուս, Ծովազարդ, Լճափ, Հայրավանք, Բերդկունք, Գեղարքունիք, Լանջաղբյուր, Ծաղկաշեն բնակավայրերի փողոցների ասֆալտապատման աշխատանքներ:

2. Գավառ համայնքի մանկապարտեզների շենքերի հիմնանորոգման և գույքերով համալրման աշխատանքներ:

3. Գավառ համայնքում ոռոգման համակարգերի կառուցում:

4. Գավառ համայնքի Լանջաղբյուր և Գեղարքունիք բնակավայրերում խմելու ջրագծերի կառուցում:

5. Գավառ համայնքում լուսավորության ցանցի ընդլայնման և արևային ֆոտովոլտային կայանների տեղադրման աշխատանքներ:

6. Գավառ քաղաքի կենտրոնական հրապարակի շատրվանային համակարգի կառուցում:

7. Բազմաբնակարան բնակելի շենքերի տանիքների և մուտքերի հիմնանորոգման աշխատանքներ:

Թվարկված ծրագրերը վերջնական չեն, յուրաքանչյուր տարի, ելնելով ֆինանսական հնարավորություններից ու նախորդ տարվա ծրագրերի ավարտական աստիճանից, դրանք ենթարկվում են փոփոխության, ինչպես նաև առաջանում են նոր առաջնահերթություններ:

«Տեղական ինքնակառավարման մասին» և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքները հնարավորություն են ընձեռում՝ ելնելով ֆինանսական հնարավորություններից յուրաքանչյուր տարվա ընթացքում համայնքի բյուջեում կատարել համապատասխան ոլորտային տեղաշարժեր, ճշտել ծրագրերը, դրանք համապատասխանեցնել ֆինանսական հնարավորություններին և ապահովել դրանց կատարումը:

2023 թվականի վարչական բյուջեի եկամուտները 2022 թվականի համեմատ աճել է 147,269.200 ՀՀ դրամով, որից՝ 130,850.500 դրամը համայնքին տրամադրվող համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիայի հաշվին, իսկ 16,418.700 դրամը հարկերի և տուրքերի հաշվին:

Ֆոնդային մասի եկամուտները 2022 թվականի համեմատ աճել է 1,327,058.900 դրամով, որը՝ համայնքի կողմից ներկայացված և կառավարության կողմից հաստատված 2023 թվականին սուբվենցիոն ծրագրերով կատրվելիք աշխատանքների համար նախատեսված ընդհանուր գումարն է:

ՄԺԾԾ կնպաստի որպեսզի ավելի ճիշտ պլանավորվեն ֆինանսական միջոցները սուբվենցիոն ծրագրերի իրականացման նպատակով:

Ծրագրի բոլոր հաշվարկները ներկայացված են Ձեզ տրամադրված հավելվածներում: